


# ԵՐԿՈՒ ՔՈՅՐ՝ ՄԷԿ ՆՊԱՏԱԿ

Ալիծ Ճեպեճեան-Աղպապեան եւ Անահիտ (Կրէշ) Ճեպեճեան-Սարգիսեան՝ երկու քոյրեր են, որոնց կեանքը ամասկարկ նուիրում է հայ մշակույթի եւ գրականութեան՝ ի մասնաւորի մանկապատանեկան ծիրէն ներս:


հայկական գիրքի՝ Քեանայի մանկապատանեկան ու երիտասարդական օրերու անցուցած ամսանային հաճելի օրերը...: Գիրքին ջորը, լեռներն ու ձորերը, մարտի օրն ու հոտաւէտ թուկերու բուրմունքը, գիղափներու պարզ ու հարուստ լեզուն, բարբառը ու հոգեբանութիւնը, կենցաղն ու մտածելակերպը՝ մշակած են սէրը զարգացնելու:



լու մանկապատանեկան գրականութիւն:

Ալիծ եւ Անահիտ՝ երկու քոյրեր, որոնք սնցատարք հիմնած են հրատարակչական միատրքեր՝ զարկ տալու մանկապատանեկան գրականութեան: Եւ այս սպրուած փորձառութիւնները՝ հայ մշակույթի եւ երաժշտութեան աւանդը՝ գրականութիւնը եւ հասանելի միջնէ Լայկական Յեղասպանութիւնը՝ կը կազմեն Ալիծի ու Անահիտի հրատարակութիւններու բովանդակութիւնը:

Տասնեակէ մը աւելի հրատարակութիւններ՝ անկախաբար ու մի քանի միասին, անհատական մասնաձեռութիւններ են: Ալիծ ու Անահիտ իրենց հրատարակութիւններու մէջէն կը պատմեն... կը վերապատմեն հայ գիրք, առակներ, հայկական կենցաղ, հայ երաժշտութիւն, ինչպէս նաեւ Յեղասպանութիւն: Պէտք է վառ պահել հայ մասնուկի ու պատանիի մէջ հայկական աւանդը, եւ աշխարհը մէկտեղ: Պատմութիւններուն հետ կան յատուկ գծագրութիւններ, որ աւելիով կ'օգնեն հայ մասնուկին ու պատանիին հասկնալու բովանդակութիւնը: Եւ գծագրութիւնները աշխատանքն են Անահիտի:



Իրենց հայրը՝ Վաչէ Ճեպեճեան՝ երգի ու երաժշտութեան հանդէպ սերմանած է սէրը Ալիծի ու Անահիտի սրտերուն ու հոգիներուն մէջ: Ընտանեկան յարկը եղած է երաժիշտ բարեկամներու հաւաք, որուն ընդմէջէն զարգացած է արուեստի հանդէպ սէրը եւ նուիրումը:




Ու տակաւին՝ հայկական վարժարանը, Հայ Աւետարանական եկեղեցիի դաստիարակութիւնը, միջին արեւելեան համամարդկային շփումը ու հաղորդակցութեան ջերմութիւնը, հայրենիքի դաստիարակութիւնը, ու Հայկական Յեղասպանութեան վերապահ ընտանեկան փորձառութիւնը՝ ենթահող ծառայած են Ալիծի ու Անահիտի հայ մշակույթի ու գրականութեան հանդէպ նուիրական աշխատանքը: Ու կալ տակաւին



Հայանցիկ սկնարկ՝ քանի մը հրատարակութիւններու եւ ամոնց բովանդակութեան մասին:



Ալիս Ճեպեճեան-Աղպապեան՝ ներկայիս կ'ապրի Լոս Անճելէս: Հիմնած է «Ծիւլուծա» հրատարակչական միատրք: Հեքիաթասաց ու պատմող (story telling) իր հրատարակչական գործին առընթեր կը կազմակերպէ երոյթներ հայ մշակույթի եւ գրականութիւնը փոխանցելու նոր սերունդին:





Անահիտ Ճեպեճեան-Սարգիսեան՝ ներկայիս կ'ապրի Փարիզ: Մանկավարժ, ուսուցիչ եւ երաժիշտ՝ հիմնած է "Բարեկ Արեւ" հրատարակչական միատրք: Կը պաշտօնավարէ հայկական Դպրոցասէր վարժարանին մէջ:



1996 թուականէն սկսեալ, երկու քոյր՝ Ալիծ եւ Անահիտ, կը հետապնդեն մէկ նպատակ, հայ գիրք ու մշակույթը փոխանցել հայ նոր սերունդին եւ աշխարհով մէկտեղ:

ՀՐԱՅՐ ԾԵՊԵՃԵԱՆ



## ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

### «ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԽՃԱՆԿԱՐ» ԳԻՐՔԸ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հ. Լեւոն Զեքիեանի հեղինակութեամբ 2001ին Պէրոյ լոյս տեսած «Ինքնութեան Խճանկար» խորագրեալ հափորը արժանացած է վերջերս միջազգային մասնաւոր գնահատանքի: Բրայլի կրթական նախարարութեան կողմէ, նաեւ Բրայլիային դուրս գրնուող մասնագէտներու խորհուրդով կապարտած գնահատանքով մը, սոյն գիրքը դասուած է 2001-2004 եռամեայի ընթացքին Բրայլիայ մէջ հրատարակուած համալսարանական լուսագոյն ուսումնասիրութիւններու շարքին՝ «գերապահ» որակումով:

Գիրքը լոյս տեսած է Մալբի Գաապարեանի խմբագրութեամբ, Արմէն Յարութիւնեանի հրատարակչութեամբ եւ Արմէն եւ Միմի Յարութիւնեաներու մեկենասութեամբ:

ԳՐԻՄՆ  
ՊՈՒՐԱԸՍ ՄԵՆԿՈՒԹԱՅԻՆ ՄՐՈՒԹԵԱՆ

## Երգարուեստ

### «ՔՆԱՐ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՅԱԶՈՂ ՀԱՄԵՐԳԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՆՈՅԻ ՄԷՋ

1992 թուականին, ՀԿՄի «Քնար» երգչախումբը, խմբավարութեամբ հայրենի արուեստագէտ Պարոն Ժիրայր Ալթունեանի, տուաւ իր առաջին համերգը Դամասկոսի նորակառոյց պետական երաժշտանոցի մէջ, հրաւերովը ու ֆաշայերանովը երաժշտանոցի հիմնադիր տնօրէն Պր. Սուլիկի էլ Ուստի: Համերգի աւարակին՝ խումբի պատասխանատու Պր. Սարգիս Քեչիշեան երբ շնորհակալութիւն կը յայտնէր Պր. տնօրէնին՝ ան դառնալով երգչախումբին ըսաւ. «Մենք ձեզի շնորհակալութիւն կը յայտնենք քանի որ դու՛մ այսօր մեզի դաս մը տուիք»: Եւ իսկապէս Պր. տնօրէնի ջանքերով, յաջորդ տարեշրջանին իսկ երաժշտանոցի մէջ այլեւայլ երաժշտական ուսումնակներու կողմէն հաստատուեցաւ երգչախումբի դրութիւն ու այդ կապակցութեամբ հրաւիրուեցաւ իսկապէս Պր. Վիքոր Պապեճեան, որ մեծ ներդրումը ունեցաւ կազմելու շատ լաւ երգչախումբ մը, որուն անդամները երաժշտանոցի ուսանողներն են, ու վերջին մի քանի տարիներուն նաեւ արհեստավար երգչախումբ մը, կազմուած երաժշտանոցի շրջանաւարտներէ, որոնք կը կատարեն երգչախմբային արուեստի լաւագոյն նմուշներէն, ինչպէս նաեւ զարկ կու տան արարական խմբերգներու կատարումներու: Այստեղ յիշենք թէ այդ արարական խմբերգներու մեծ մասը՝ մշակումներն են Դոկտ. Էտի Թորիկեանի որ իսկապէս՝ արարական երգչախմբային աւանդութիւններ ստեղծելու ուղղութեամբ մեծ աշխատանք կը տանի, սեփական մշակումներ կատարելով արարական ժողովրդական թէ հեղինակային երգերու:



Խումբը ուշադրութեամբ կը հետեւի խմբավար Ծանթ Քեչիշեանի ցուցումներուն...

21 Մայիս 2006ի երեկոյեան ՀԿՄի «Քնար» երգչախումբը, 1992ի ու 1993ի ելոյթներէն ետք իր երրորդ համերգը կու տար երաժշտանոցի սրահին մէջ, հաստատելով որ «Քնար»ը կը շարունակէ իր մասնակցութիւնը բերել ֆաղափ մշակութային գործունէութիւններուն, ներկայացնելով հայ արուեստագէտ, եւ թէ մեծագոյն դասը որ ընկած են «Քնար»ի անդամները, այն է թէ պէտք է յարատեւել յաջողութեան հասնելու համար:

Ելոյթին ներկայ էին տեղացի թէ հայ մեծ թիւով երաժշտաւերներ, ծնողներ, բարեկամներ ու երաժշտանոցի ուսանողներ: «Քնար»ի ելոյթը իրենց ներկայութեամբ պատուած էին Գերշնորի Տէր Արմաշ Նպա. Նալպանտեանը՝ Առաջնորդ Դամասկոսի Հայոց Թեմին, Գերապատի Հայր Բարսեղ վրդ. Պաղտասարեանը Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդային, Պատուելի Տաթև Պատմաբանը Դամասկոսի Հայ Աւետարանական համայնքի հովիւ, Արժանապատիւ Տէր Արգաթ Բահանայ Գահէնեանը, Առաքինազարդ բոյրերը Անարատ Յղութեան միասնութեան, Հայաստանի հանրապետութեան դեսպանատան Ա. Բարսուղար Տիկիւն Նելի Մաբէտեանը, երաժշտանոցի տնօրէն Պր. Ասիլ Համաւը ու փոխ-տնօրէն Պր. Հուսամ Պրիմոն, Սուրբոյ ազգային սեմֆոնիք նուագախումբի ղեկավար մանսրո Միսաթ Պաղպուտարեանը ու երաժշտանոցի երգչախումբի ղեկավար Պր. Վիքոր Պապեճեան:



Երգչախումբը խմբավար ունենալով Ծանթ Քեչիշեանը ու դաշնակի ընկերակից Աննո Քեչիշեանը, ներկայացուց ընտրանքի մը իր վերջին տարիներու երգացանկէն: Հնչեցին ստեղծագործութիւններ ու մշակումներ Էսկար Յովհաննիսեանէն, Բարսեղ Կանաչեանէն, Թարսու Ալթունեանէն, Արամ Խաչատրեանէն, Ալեքսանդր Յարութիւնեանէն, Էտի Թորիկեանէն, Սեպար-Նովայէն ու շատ մը այլ հեղինակաւոր երաժիշտներէ: «Քնար»ի անդամները հետեւելով խմբավարի ցուցումներուն, ունեցաւ զուսպ, լաւապէս երանգաւորուած յաջող կատարում մը, իսկ դաշնակահար Աննո Քեչիշեանի ընկերակցութիւնը գնահատելի էր ինչպէս միշտ: Խմբերգներու մէջ մեներգի բաժիններով հանդէս եկան փորձառու երգիչներ՝ Ժողէֆ Իսէնտերեանը, Լիւմ Հաննան, Յակոբ Տեմիրեանը, Դալար Քեչիշեանը, Գրիգոր Ասատրեանը, Սարգիս Քեչիշեանը, որոնք իրենց գեղեցիկ մեկնաբանութեամբ առաւել արժեւորեցին ներկայացուած գործերը: Արուեստի այս տան մէջ, «Քնար»ի երգչախումբը արժանացաւ անխտիր բոլոր ներկաներու ջերմ ծափահարութիւններուն, որոնք մեծապէս գնահատեցին սիրողական այս խումբի խանդավառ ու ջերմ երգեցողութիւնը:

Անկախմանօրէն «Քնար»ի անդամները ու պատասխանատուները կրնան հպարտ ու ուրախ ըլլալ իրենց կատարած աշխատանքով, քանի որ անոնք այս տարեշրջանին, կարողացան հայ երգը լսելի դարձնել հեռուոր Քեանայի մէջ, մասնակցել գաղութի կարեւորագոյն ազգային ձեռնարկներուն ու ահաւասիկ այսօր՝ ներկայանալ տեղացի արար ու հայ երաժշտաւերներուն ու մասնագէտներուն, ու հետաքրքրութիւն ստեղծել հայկական երաժշտութեան մէջ:

Համերգի աւարակին՝ ծաղիկներով պատուուեցան խմբավարը, դաշնակահարը ու խումբի անդամները, որոնք բոլորը մեծապէս շնորհակալ եղան երաժշտանոցի տնօրէնին ու փոխ տնօրէնին այս եզակի առիթը ստեղծելուն համար: Ներկաները լաւ սրամաղութիւններով, հրգով ու երաժշտութեամբ յագեցած՝ մեկնեցան սրահէն, սպասելով «Քնար»ի յաջորդ ելոյթներն ու համերգները: